«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր

Պ. Ս. Ավետիսյան

« 07 » 05. 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Ալեքսանդր Գեղամի Խաչատրյանի՝ «Ույղուրական գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության ոլորտում (20-րդ դարի երկրորդ կես – 2010-ական թթ.)» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ տրված Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի կողմից:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական «պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» հիմնախնդիրների ամբիոնի 2021 թվականի մայիսի 7-ին նիստում (№ 50):

Մասնակցում էին՝

Մարգարյան Երվանդ Հրանտի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի վարիչ, **Մաիլյան Բենիամին Վիկտորի՝** պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Եվստրատով Անտոն Գենադիի՝** պատմական գիտությունների թեկնածու:

Ալեքսանդր Գեղամի Խաչատրյանի գիտական թեզի թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնում, գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Կարապետյան:

Թեկնածուական թեզը նվիրված է որոշակի կիրառական հետաքրքրություն ներկայացնող թեմային: Արևելյան Թուրքեստանը միշտ գտնվել է գերտերությունների բախման կիզակետում: Այդ երկրամասի շուրջ ձևավորվել է պատմագիտական և քաղաքական հակասական խոսույթներ և ույղուրական հարցը արդեն երկար ժամանակ է ինչ շարունակում է մնալ զանազան շահարկումների առարկա: Նեոսմանիզմի մոլուցքով տառապող Թուրքիան ակտիվորեն միջամտում է ույղուրական հարցին, հրահրելով թյուրքական անջատողականներին ընդդեմ Պեկինի: Ույղուր ազգայնականներն իրենց հերթին Սինձյանի ապագան կապում են վերածնված Օսմանյան կայսրության հետ: ԱՄՆ և Եվրոպան, առաջնություն տալով տարածքային ամբողջության սկզբունքին, այնուամենայնիվ նախընտրում են պահպանել չեզոք դիրք

այդ հարցում: ՌԴ-ն ույղուրական խնդրի վերաբերյալ չունի արտահայտված կողմնորոշում, ու ևս չեզոքություն է դրսևորում, որպեսզի չխաթարի հարաբերությունները Չինաստանի հետ մի կողմից, Թուրքիայի և Ադրբեջանի հետ, մյուս կողմից: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն ևս չի շտապում արտահայտել իր դիրքորոշումը: ՀՀ արտաքին գերատեսչությունը նախընտրում է համապարփակ ուսումնասիրության ենթարկել այս բազմաշերտ և բազմաբովանդակ խնդիրը, ակտիվ դիրքավորման հարցը թողնելով մինչև լավագույն ժամանակները: Ըստ էության միայն ՉԺՀ-ն, Թուրքիան և Ադրբեջանն այսօր ունեն հստակ ձևավորված տեսակետ այդ կնճռոտ բովանդակություն հարցի վերաբերյալ:

Ընտրված թեման լավ է ուսումնասիրված, սակայն արդիական է, և ունի աներկբա գործնական-քաղաքական, գիտատեսական նշանակություն:

Աշխատությունը կազմված է առաջաբանից (այդ թվում աղբյուրների և գրականության համառոտ տեսություն), երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից: Աշխատության *ներածության* մեջ տրված է թեմայի արդիականությունը, հստակեցված են հետազոտության նպատակը և խնդիրները, բնութագրված են գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Ույղուրների ծագումը, պատմական ուղին և Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի ձևավորումը»: Վերլուծության է ենթարկված ույղուրական էթնոսի ծագման և տարածման հարցը (հին ժամանակներից մինչև 19-րդ դարի վերջ) և 20-րդ դարում ույղուրական պետական կազմավորումներ միացումը Չինաստանին:

Երկրորդ գլխում՝ ««Ույղուրական հարցի» ծագումն ու ազդեցությունը ՉԺՀ տարածաշրջանային քաղաքականության վրա» ներկայացված են Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականության փոխակերպումները:

Տարբեր ենթագլուխներում ներկայացված են ՍՈՒԻՄ-ում անջատողական տրամադրությունների աճի նախադրյալները, վերջիններիս ներքին և արտաքին պատճառները: Ցույց է տրված ինչպես է ՉԺՀ-ն արձագանքում անջատողականության, ահաբեկչության, կրոնական ծայրահեղականության դրսևորումների և անվտանգության սպառնացող այլ մարտահրավերին:

Երրորդ գլխում՝ «Ույղուրական գործոնը Չինաստանի արտաքին քաղաքականության բազմակողմ ձևաչափում» պատմվում է ՉԺՀ հակաահաբեկչական քաղաքականության ինստիտուցիոնալացման մասին, հատկապես՝ «ույղուրական հարցի» միջազգայնացման տեսանկյունից 21-րդ դարի սկզբին: Առանձնակի ուշադրություն է դարձվում «Ույղուրական հարցի» միջազգայնացմանը՝ ՄԱԿ, ԵՄ, ՇՀԿ շրջանակներում: Նույն գլխում արծարծվում է տրամաբանական հարց թե «Ույղուրական հարցը» ի՞նչ տեղ է գրավում Հայաստանի և Թուրքիայի՝ Չինաստանի հետ հարաբերությունների համատեքստում:

Աշխատանքում առկա են հետաքրքիր նկատառումներ և թերություններ:

Սկսենք աշխատանքի առավելություններից.

1. Պատմական ակնարկում մանրամասն ներկայացվել են ույղուրների փոխհարաբերությունները Չինաստանի և տարածաշրջանային այլ խաղացողների հետ:

2. Հստակ բաժանված և բացատրված է ՉԺՀ-ում «ույղուրական» և «իսլամական» խնդրի տարբերությունը: Ժամանակակից գրականության մեջ հաճախ շփոթում են մեկը մյուսի հետ, ինչի պատճառով տեղի է ունենում գործընթացների սխալ մեկնաբանում:

3. Դրվատանքի են արժանի հղումներ ոչ միայն ՉԺՀ-ի, այլև հարևան պետությունների իրավաբանական փաստաթղթերին, որոնք լրացուցիչ լույս են սփռում Չինաստանի ներքին կյանքի ու նրա առանձնահատկությունների վրա:

4. Ույղուրական հարցի առավել մանրամասն քննարկումը միջազգային և տարածաշրջանային քաղաքականության տեսանկյունից: Դիսերտանտը հստակ մատնանշել է թե ինչու Սինձյանի հակամարտությունը չի կարելի համարել պարզապես ներչինական խնդիր, մատնանշվել է նրա սերտ կապը Միջին Ասիայում գոյություն ունեցող հին հակամարտությունների կլաստերի հետ:

5. Աշխատանքում տրվել է թուրք-չինական հարաբերությունների բազմակողմանի, թեև ոչ սպառիչ վերլուծություն:

6. Մանրամասն քննարկվել են հայ-չինական հարաբերությունները, և այն, թե ինչ տեղ է զբաղեցնում այդ հարաբերություններում «ույղուրական» խնդիրը: Հեղինակը փաստարկված ցույց է տվել, որ թեև այս հարցում հայ-չինական հարաբերությունների համատեքստում՝ «ույղուրական» խնդիրն այսօր արդիական չէ: Այն չի կարող օգտագործվել որպես կողմերից որևէ մեկի վրա ներգործելու քաղաքական ազդեցության գործիք: Այդ պատճառով էլ այս թեման այսօր ներկայացնում է առավելապես ակադեմիական հետաքրքրություն: Սակայն այն հետագա մշակման կարիք ունի, քանի որ դինամիկ փոփոխվող աշխարհում ցանկացած խնդիր, և «ույղուրական» խնդիրը բացառություն չէ, կարող է առաջնային նշանակություն ստանալ: Կարևոր է, որ մենք հերթական անգամ անպատրաստ չհայտնվենք:

Այժմ թերությունների մասին.

1. Քննելով «Ույղուրական էթնոսի ծագումը և տարածումը (հին ժամանակներից մինչև 19-րդ դարի վերջ)» վերնագիր կրող 1.1. բաժնում խնդրո առարկան՝ ատենախոսը շրջանցում է և չի հաղորդում նրանց միջավայրում իսլամի տարածման պատմության մասին, այնինչ կրոնական գործոնը հանդիսանում է սույն հանրության ինքնության ձևավորման կարևոր բաղադրիչներից մեկը:

2. Վերլուծելով չին-ույղուրական միջէթնիկ հարաբերությունների առաջացման պատմությունը՝ ատենախոսը մոռանում է (էջ 14) հիշատակել «Մետաքսի ճանապարհի» կարևոր գործոնը, որը չափազանց մեծ դերակատարություն ունեցավ սույն կապերի ձևավորման պարագայում

3. Ատենախոսը՝ վկայակոչելով կորեացի հեղինակներին (Jung-Ho Bae, Jae H. Ku, Korea Institute for National Unification (South Korea), China's Internal and External Relations and Lessons for Korea and Asia, 길잡이미디어, 2013, 425 p.) գրում է. «1884 թվականին չինական իշխանությունը որոշում է միացնել Քաշգարին հարող տարածքներն ու Ջունգարիան և ստեղծել մեկ ընդհանուր մարզ՝ «Սինձյան» անվանումով» (էջ 19): Հիշեցնենք, որ հիշյալ թվականին տեղի է ունեցել միայն սույն մարզի վերաստեղծումը՝ Ցինների կողմից նրա վերանվաճման պարագայում: Ինչ վերաբերում է «Սինձյան» եզրույթին, ապա նման անվանում կրող միավորը

կազմավորվել է դեռ 1760 թ., երբ չին-մանջուրական զորքերը գլխավորապես ավարտեցին այս տարածքի նվաճումը (տե՛ս Ануфриев К.С. Политика России и Китая в Центральной Азии. - Томск: изд-во Том. ун-та, 2011. С. 63; Юсупов И.И. Завоевание Восточного Туркестана Китаем и его последствия// Актуальные проблемы советского уйгуроведения. – Алма-Ата: изд-во Наука, 1983. С. 211; Непомнин О. Е. История Китая: *Эпоха Цин.* XVII - начало XX века / Ин-т востоковедения. - Москва: изд-во Вост. лит., 2005. С. 128):

4. Ատենախոսը գրում է, որ «Յեթթիշաար» պետությունը ստեղծվել է ույղուրների կողմից (էջ 20): Սակայն, ինչպես հայտնի է, նա ունեցել է բազմազգ բնակչություն, չի կրել էթնիկական բնույթ և առաջացել է տեղի մուսուլմանների միջավայրում խլրտումների պատճառով: Սույն կառույցի հիմնադիրը և առաջնորդը Յակուբ բեկը նույնպես չի պատկանել ույղուրական էթնոսին (տե՛ս Алпысбес М.А., Ергалиева Д.С, Халиева А.Н., ИСТОРИЯ ГОСУДАРСТВА ЯКУБ-БЕКА И «БОЛЬШАЯ ИГРА» В ВОСТОЧНОМ ТУРКЕСТАНЕ//Отан Тарихы, 2018, № 3, Алматы):

5. Առաջին գլխի (ՈՒՅՂՈՒՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ՍԻՆՋՅԱՆ-ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ) շարադրանքը որևէ գիտական խնդրի ինքնուրույն լուծման օրինակ չի տալիս, այլ ունի զուտ ճանաչողական բնույթ: Խճճված գիտական խնդիրները սույն բաժնում ներկայացված են չափազանց պարզունակ և թռուցիկ: Կատարված է միայն նրանց հպանցիկ քննությունը:

6. Ատենախոսը չի օգտվել մի շարք հեղինակների գիտական վերլուծություններից, ովքեր մինչ այժմ իրենց թեզերում քննարկել են նույնանման թեմաներ: Տե՛ս Ван Цзяньган. «УЙГУРСКИЙ ВОПРОС» И ЭТНОПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В СИНЬЦЗЯНЕ. Специальность: 07.00.07 – «Этнография, этнология и антропология». Дисс. канд. истор./полит. наук. Москва, 2018; Яо Ван. СИНЬЦЗЯН-УЙГУРСКИЙ АВТОНОМНЫЙ РАЙОН И ПОЛИТИКА КНР В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ МЕЖДУНАРОДНОЙ БЕЗОПАСНОСТИ. Специальность 23.00.04 – «Политические проблемы международных отношений, глобального и регионального развития». Дисс. канд. полит. наук. Москва, 2015; Афанасьева В.А. Синьцзян-Уйгурский автономный район во внутренней политике Китая 1991–2006 гг. Дисс. канд. истор. наук. – Томск, 2007; Бондаренко А.В. Проблемы и перспективы развития Синьцзян-Уйгурского автономного района КНР в начале XXI в. Автореф. дисс. канд. полит. наук. – Москва, 2007.

7. Հետազոտությունն անշուշտ կշահեր, եթե ատենախոսը օգտվեր նաև ստորև նշված հեղինակների մեկնություններից.

- Клинов А. С. К вопросу о событиях в Синьцзяне в начале 1930-х гг // ИСОМ. 2018. №1. URL: https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-sobytiyah-v-sintszyane-v-nachale-1930-h-gg (дата обращения: 16.05.2021).
- Бармин В. А. Ещё раз о мотивах советского правительства при оказании военной помощи властям Синьцзяна в подавлении национально-освободительного движения коренных народов провинции в 1931-1934 гг // Вестник Сургутского государственного педагогического университета. 2014. №4 (31). URL: https://cyberleninka.ru/article/n/eschyo-

raz-o-motivah-sovetskogo-pravitelstva-pri-okazanii-voennoy-pomoschi-vlastyam-sintszyana-v-podavlenii-natsionalno-osvoboditelnogo (дата обращения: 16.05.2021).

• Абдуллаев К. Н. Русские и восстание в Синьцзяне в первой трети 1930-х гг // Известия АлтГУ. 2015. №4 (88). URL: https://cyberleninka.ru/article/n/russkie-i-vosstanie-v-sintszyane-v-pervoy-treti-1930-h-gg (дата обращения: 16.05.2021).

• Баженова Е. С. Синьцзян и новые горизонты Великого шелкового пути // Пространственная экономика. 2011. №2. URL: https://cyberleninka.ru/article/n/sintszyan-i-novye-gorizonty-velikogo-shelkovogo-puti (дата обращения: 16.05.2021).

• Миллуорд Джеймс А. Современный Синьцзян в исторической перспективе // Вестник Евразии. 2001. №4. URL: https://cyberleninka.ru/article/n/sovremennyy-sintszyan-v-istoricheskoy-perspektive (дата обращения: 16.05.2021).

• Зотов О.В. Восточный Туркестан (Синьцзян) в новой «Большой игре» великих держав // Общество и государство в Китае. 2014. №1. URL: https://cyberleninka.ru/article/n/vostochnyy-turkestan-sintszyan-v-novoy-bolshoy-igre-velikih-derzhav (дата обращения: 16.05.2021).

• Зотов О. Синьцзян-Уйгурский автономный район КНР в системе азиатских «Дуг нестабильности» // Россия и мусульманский мир. 2009. №2. URL: https://cyberleninka.ru/article/n/sintszyan-uygurskiy-avtonomnyy-rayon-knr-v-sisteme-aziatskih-dug-nestabilnosti (дата обращения: 16.05.2021).

• Зотов О. Восточный Туркестан (Синьцзян): на весах истории и геополитики // Россия и мусульманский мир. 2009. №7. URL: https://cyberleninka.ru/article/n/vostochnyy-turkestan-sintszyan-na-vesah-istorii-i-geopolitiki (дата обращения: 16.05.2021).

• Желобцов Ф. Ф. События в Синьцзяне угроза международной безопасности в Центральной Азии // Вестник СВФУ. 2010. №2. URL: https://cyberleninka.ru/article/n/sobytiya-v-sintszyane-ugroza-mezhdunarodnoy-bezopasnosti-v-tsentralnoy-azii (дата обращения: 16.05.2021).

• Яо Ван, Капицын В. М. Территориальная автономия как институт национальной политики в Синьцзяне // ЭТАП. 2013. №5. URL: https://cyberleninka.ru/article/n/territorialnaya-avtonomiya-kak-institut-natsionalnoy-politiki-v-sintszyane (дата обращения: 16.05.2021).

• Крючкова К. С. О содержании понятия «Восточный Туркестан» и топонима Синьцзян // Вестник СПбГУ. Язык и литература. 2005. №4. URL: https://cyberleninka.ru/article/n/o-soderzhanii-ponyatiya-vostochnyy-turkestan-i-toponima-sintszyan-1 (дата обращения: 16.05.2021).

• Бондаренко А. В. Современная национальная и религиозная политика в Синьцзян-Уйгурском автономном районе // Россия и АТР. 2007. №3. URL: https://cyberleninka.ru/article/n/sovremennaya-natsionalnaya-i-religioznaya-politika-v-sintszyan-uygurskom-avtonomnom-rayone (дата обращения: 16.05.2021).

• Клиновский В. А. Языковая политика КНР в Синьцзяне и ее роль в китайско-уйгурском конфликте // Вестн. Том. гос. ун-та. История. 2012. №2 (18). URL:

https://cyberleninka.ru/article/n/yazykovaya-politika-knr-v-sintszyane-i-ee-rol-v-kitaysko-uygurskom-konflikte (дата обращения: 16.05.2021).

• **Ананьина Д. А.** Межэтнический конфликт на территории Синьцзян-Уйгурского автономного района КНР // Гуманитарный вектор. 2018. №3. URL: https://cyberleninka.ru/article/n/mezhetnicheskiy-konflikt-na-territorii-sintszyan-uygurskogo-avtonomnogo-rayona-knr (дата обращения: 16.05.2021).

• **Ананьина Д. А.** ВЛИЯНИЕ КУЛЬТУРНОЙ РЕВОЛЮЦИИ НА ТРАНСФОРМАЦИЮ ЭТНОКУЛЬТУРНОЙ ИДЕНТИЧНОСТИ МАЛОЧИСЛЕННЫХ НАРОДОВ КНР (НА ПРИМЕРЕ УЙГУРОВ СУАР) // Гуманитарный вектор. 2020. №4. URL: https://cyberleninka.ru/article/n/vliyanie-kulturnoy-revolyutsii-na-transformatsiyu-etnokulturnoy-identichnosti-malochislennyh-narodov-knr-na-primere-uygurov-suar (дата обращения: 16.05.2021).

• **Камалов А. К.** Вопросы истории и культуры уйгуров в трудах американских ученых // Мир Большого Алтая. 2016. №2 (2.2). URL: https://cyberleninka.ru/article/n/voprosy-istorii-i-kultury-uygurov-v-trudah-amerikanskih-uchenyh (дата обращения: 16.05.2021).

• **Хаджиева Г. У.** Место Синьцзян-Уйгурского автономного района в новой региональной стратегии КНР // Мир Большого Алтая. 2016. №2 (2.2). URL: https://cyberleninka.ru/article/n/mesto-sintszyan-uygurskogo-avtonomnogo-r ayona-v-novoy-regionalnoy-strategii-knr (дата обращения: 16.05.2021).

• **Васютин С. А.** Трансформация властных институтов уйгуров в период раннего средневековья: от племенной политии к государству // Вестн. Том. гос. ун-та. История. 2011. №1 (13). URL: https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-vlastnyh-institutov-uygurov-v-period-rannego-srednevekovya-ot-plemennoy-politii-k-gosudarstvu (дата обращения: 16.05.2021).

• **Вашкявичус В. Ю., Судьенков Д. А.** О ПРЕДПОСЫЛКАХ АКТИВИЗАЦИИ СЕПАРАРАТИЗМА И ЭКСТРЕМИЗМА В СИНЬЦЗЯН-УЙГУРСКОМ АВТОНОМНОМ РАЙОНЕ КНР // Казанский вестник молодых учёных. 2020. №4. URL: https://cyberleninka.ru/article/n/o-predposylkah-aktivizatsii-separaratizma-i-ekstremizma-v-sintszyan-uygurskom-avtonomnom-rayone-knr (дата обращения: 16.05.2021).

8. Աշխատանքի որոշակի թերություն է նրա ընդհանուր նկարագրական բնույթը:

9. Ներածությունում արդիականության բաժնում խոսվում է Չինաստանի հյուսիս-արևմուտքում կրոնական ծայրահեղությունների մասին, սակայն ակադեմիական անկողմնակալությունը պահանջում է ցույց տալ նաև Չինաստանի իշխանությունների կողմից, երբեմն ծայրահեղության հասնող կրոնական անհանդուրժողականության դրսևորումները:

10. Ներածությունում արդիականության բաժնում խոսվում է ույղուրական հարցում Թուրքիայի ներգրավվածության նաև ԱՄՆ-ի ու այլ արևմտյան երկրների ընդգծված հետաքրքրության մասին: Արդյո՞ք դրա վերաբերյալ կան փաստարկներ, որովհետև ույղուրական կողմը դժգոհում է հակառակի մասին, տրտնջալով մանավանդ

մուսուլմանական պետություններից իրենց խնդիրների նկատմամբ անտարբեր լինելու համար:

Այնուհանդերձ, նշված դիտողությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժեքը:

Ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացնող պահանջներին: Այն գրված է պատշաճ գիտական մակարդակով: Ամբողջությամբ վերցված ատենախոսությունը հաջողված հետազոտություն է: Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի կողմից սեղմագրի վերջում ներկայացված հոդվածներում:

Ելնելով վերոհիշյալից Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնը միջնորդում է գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմության» մասնագիտական խորհրդին Ալեքսանդր Գեղամի Խաչատրյանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը:

Ատենախոսությունը քննարկվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության ամբիոնի 2021թ. մայիսի 7-ին կայացած նիստում (№50):

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանագիտության» ամբիոնի նիստում, գրառում N50, մայիսի 7-ին, 2021 թ. (№ 50):

Ատենախոսության քննարկմանը մասնակցել են պ.գ.դ., պրոֆեսոր Ե.Հ. Մարգարյանը, պ.գ.թ., դոցենտ Բ.Վ. Մաիլյանը, պ.գ.թ. Հ. Հ. Հակոբյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Ա.Գ. Եվստրատովը, ասիստենտ Հ. Խ.Բարդակչյանը:

Համաշխարհային պատմության և
արտասահմանյան տարածաշրջանագիտության ամբիոնի վարիչ,
պ. գ. դ. , պրոֆ., ամբիոնի վարիչ՝ Ե. Հ.Մարգարյան

Հայ-Ռուսական համալսարանի
Գիտական քարտուղար՝ Ռ. Ս. Կասաբաբովա